ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Տարոնիկ բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/71 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի հունվարի 11-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/71-1 ծածկագրով պայմանագրում 2024 թվականի փետրվարի 23-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ. Կատարողի կողմից ստացված գրության և պատասխանատու ստորաբաժանման համապատասխան զեկուցագրի հիման վրա՝ Մեծամորի համայնքապետարանի և «ՀՈՒՍԱԼԻ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ և «ԱՎԵՏԻՍ ԽԵՑԻ» ՍՊԸ կոնսորցիումի միջև 2023 թվականի հունվարի 11-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/71-1 պայմանագրի կատարման ժամկետի երկարացման անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն. Մեծամորի համայնքապետարանի և «ՀՈՒՍԱԼԻ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ և «ԱՎԵՏԻՍ ԽԵՑԻ» ՍՊԸ կոնսորցիումի միջև 2023 թվականի հունվարի 11-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/71-1 Պայմանագրի Հավելված թիվ 1-ով սահմանված 1-ին չափաբաժնի մասով «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի «Ժամկետը**» սյունակի «…Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 250 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «…Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 267 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

Պայմանագրի Հավելված թիվ 2-ի «ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»-ի «Աշխատանքների կատարման ժամկետը»-ի «Ավարտը» սյունակում՝ 1-ին չափաբաժնի մասով նշված «Աշխատանքաների սկզբից 250 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «Աշխատանքաների սկզբից 267 օրացուցային օրվա ընթացքում» բառերով, ինչպես նաև Պայմանագրի շրջանակներում կնքված Համաձայնագիր 2-ում Հավելված 2-ով ներկայացված «Օրացուցային գրաֆիկ»-ի «Աշխատանքների կատարման ժամկետը» սյունակի «Ավարտը» ենթասյունակի « Աշխատանքաների սկզբից 175 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «Աշխատանքաների սկզբից 192 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

Փոփոխության հիմնավորում. Պայմանագրի 1.1, 8.5 և 8.8 կետի համաձայն, միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ չի վերացել գնման պահանջը:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**